

37) Ուսումնասիրութիւն Սրբուհի Տիւարբի. գրեց Ա. ԱԼՊՈՅԱՆ-ՃԵՍՆ. Վենետիկ, 1901, 82 էր., 16⁰. Արտատպած „Բաղմալէպից“:

«Մուրճի» ընթերցողները արդէն ծանօթ են տիկին Սրբուհի Տիւարբի կեանքի և գրական գործունէութեան: Պ. Ալպոյաճեան իր այս աշխատութեան մէջ աւելի մեծ ուշադրութիւն նուիրել է Տիւարբի գրական գործունէութեան, իսկ կեանքի այն պայմանները, այն միջնավայրը, որի մէջ զարգացել ու գործել է հայ առաջին հեղինակ կինը, չօշափուած են շատ թուղցիկ կերպով, անցողաբար:

Հեղինակը ընդհանրապէս ճիշտ է ընթռնել Տիւարբի երեք վէպերի նշանակութիւնն ու գեղարուեստական արժանիքը և պակասութիւնները: Նրա շատ հայկացիների հետ կարելի է համաձայնուել: Բայց մի խոշոր պակասութիւն, որ ունի պ. Ալպոյաճեան, այն է, որ նա, հակառակ լինելով կանանց դատի պաշտպանութեան, չընդունելով որ հայերի մէջ էլ ֆեմինիստական շարժումը կարող է և պիտի ժամանակակից երեւոյթ համարուի, պատշաճաւոր ուշադրութեամբ չէ վերաբերում այն նիւթին, որ տիկին Տիւարբի երկերի ամբողջ միտքը, ամբողջ բովանդակութիւնն է կազմում: Պ. Ալպոյաճեան ընդունում է, որ մեր ընկերական և ամուսնական կեանքում շատ կան կնոջ դրութիւնը վատացնող նախապաշարմունքներ, բայց և ընդունում է, որ այդ նախապաշարմունքները «յարգելի են» և եթէ ջնջուեն, մեր ընտանեկան կեանքը կ'այլանդակուի: Ինչո՞ւ:—Այս հարցին գոհացուցիչ պատասխան չէ տալիս հեղինակը, այլ բաւականանում է ընդհանուր բառեր գործածելով:

Կարելի է երկար վիճել հեղինակի հետ այս հարցի առիթով: Բայց այստեղ վիճելու տեղը չէ: Եւ մենք յիշատակում ենք այս հանգամանքը միայն այն պատճառով, որ ցոյց տանք թէ կանանց հարցի մասին այսպիսի հասկացողութիւն ունեցող հեղինակի դատողութիւնները նոյնքան զին կարող են ունենալ, որքան, օրինակ, մի վարդապետի կամ եպիսկոպոսի դատողութիւնները Վօլտէրի մասին: Պ. Ալպոյաճեան շարունակ կրկնում է, որ կանանց հարց չը կայ մեզանում, որ ֆեմինիզմը հայերի համար դեռ շատ վաղաժամանակ է, անօգուտ է: Դիտենք թէ հէնց այդպէս է: Բայց միթէ մի վիպագրող չէ կարող մարգարէ դառնալ հեռաւոր կամ մօտիկ ապագայի մասին, հոգով ըմբռնել որ այս կամ այն շարժումը պիտի մտնէ և այն հասարակութեան մէջ, ուր ինքն է ապրում ու ցոլացնել իր երկերի մէջ այդ ապագան, դառնալ գալոց սերունդների ղեկավարը:—Եթէ այդպէս

դատելու լինենք, այն ժամանակ պիտի ոչինչ համարենք մեր Արտվանին էլ, Բաֆֆին էլ, որոնց մատուցած ծառայութիւններն մէջ գլխաւորներէն մէկը, եթէ ոչ առաջինը, ժամանակի բերմունքը հասկանալն էր, վաղուայ օրը գուշակելը, օդի մէջ նոր, գաղափարական հոսանք զգալը:

Պ. Ալլայօյանեան տ. Տիւսարին «ծայրայեղ ազատական» է համարում: Եւ սակայն մոռանում է որ նոյն իսկ ոչ ծայրայեղ ազատական գործիչին չէ կարելի մօտենալ վանական հասկացողութիւններով և պահպանողական գաղափարներով, եթէ, ի հարկէ, անաշու լինելու խնդիր կայ մէջ տեղ:

Լ.

38) Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ԹԵՐՃԻՄԱՆԵԱՆ.—Պատմութիւն Հայոց-
օթներորդ տպագրութիւն. Վենետիկ, 1901, եր. 102, 80^ր, բաղմաթիւ
պատկերներով, Գինը 1 ֆրանկ. (40 կոպէկ):

Այս գիրքը նոր աշխատութիւն չէ. առաջին անգամ լոյս է տեսել, եթէ չենք սխալում, 1847-ին: 50 տարուայ հնութիւն: Այսքանն էլ բաւական է՝ գրքի պակասութիւնները ցոյց տալու համար:

Մի շրջան կար մեզանում, երբ մենք շատ էինք սիրում մեր պատմութիւնը. այդ շրջանում հայերը շատ էին գրում հայոց պատմութեան դասագրքեր. համարեա ամեն տեղ ուր հայեր կային և հայ տպարան, լոյս էին հանում այդպիսի դասագրքեր: Հ. Թերճիմանեանի ներկայ աշխատութիւնը այդ շարժման բաղմաթիւ արտայայտութիւններից մէկն է: Նա աչքի չէ ընկնում առաջին արժանաւորութիւններով. պատմութեան մի շատ չոր ու ցամաք կմախք է դա, որի վրայ չէ երևում կենդանութեան որ և է նշոյլ: 102 երեսների վրայ, որոնց համարեա կէսը բռնում են պատկերները, ամփոփուած է մեր ամբողջ պատմութիւնը: Հասկանալի է որ այդպիսի ծաւալում կարելի էր զետեղել միայն անցքերի յիշատակութիւն, միայն անուններ:

Բայց թէ հեղինակը և թէ այժմեան հրատարակիչները, գրքի պակասութիւնները արդարացնելու համար, ընդգծում են մի քանի անգամ, թէ դա մի դասագիրք է երեսաների համար: Շատ լաւ: Սակայն մի՞թէ դասագիրք ասելով ամեն ինչ վերջանում է. մի՞թէ դասագիրքը չը պիտի ունենայ աշխարհ, կենդանութիւն, մի՞թէ՝ նա միայն թուականներ, անուններ և դէպքեր պիտի հաղորդէ: Գուցէ 1847-ին, երբ առաջին անգամ լոյս էր տես-